

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱՁԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փակ Բաժնետիրական Ընկերություն



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵՎԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Առ 01.01.2013թ.

Ստորև ներկայացվում են Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ Կորպորատիվ Կառավարման Հայտարարագրի աղյուսակները, որոնք իրենցից ներկայացնում են պատմողական նկարագրություն (Հավելված 1) և հայտարարագիր՝ հիմնված «հետևիր կամ բացատրիր» սկզբունքի վրա (Հավելված 2):

Այն դեպքերում, երբ Ընկերությունը չի հետևում Կանոնագրքի կոնկրետ հոդվածի պահանջին, «մեկնաբանություն» սյունակում համապարփակ բացատրություն է տրվում չհետևելու պատճառների մասին: Կանոնագրքի կոնկրետ հոդվածի պահանջին չհետևելու դեպքում Ընկերությունը նաև նկարագրում է այն քայլերը (այդպիսի քայլեր ձեռնարկված լինելու դեպքում), որոնք ապագայում կհանգեցնեն Կանոնագրքի պահանջի կատարմանը:

ԵՐԵՎԱՆ 2013

Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիր Նկարագրական մաս

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ.

«ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
փակ բաժնետիրական ընկերություն

ՀԱՍՑԵ. Կոմիտաս 49/2, ք.Երևան, 0051, Հայաստանի Հանրապետություն

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. <http://www.sarm.am/>

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՍԱԻ) Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմինն է: Ստանդարտների ազգային ինստիտուտը փակ բաժնետիրական ընկերություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համակարգում: ՍԱԻ լիազորությունն է խթանել Հայաստանում արդյունավետ և նպատակային կամավոր ստանդարտացումը: Իր լիազորության սահմաններում ՍԱԻ իրականացնում է պետական քաղաքականություն ստանդարտացման բնագավառում:

Առաքելություն: Առաջնորդել և խթանել ազգային և միջազգային ստանդարտների մշակումը և կիրառումը, ինչպես նաև համապատասխանության գնահատման որակյալ ծառայությունների մատուցումը՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրության ու ծառայությունների մրցունակության և քաղաքացիների բարեկեցության բարձրացման նպատակով:

Տեսլական: Ազգային ստանդարտների համակարգի առաջնորդման միջոցով բարելավել Հայաստանի քաղաքացիների կյանքի որակը:

2012թ. հաշվետու տարում ընդունվեց և ուժի մեջ մտավ «Ստանդարտացման մասին» ՀՀ նոր օրենքը, որը սահմանեց նոր արդիական պահանջներ ՍԱԻ կորպորատիվ կառավարման կառուցվածքի և գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, օրենքի համաձայն հիմնադրվեց ընկերության Կառավարման Խորհուրդը: ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.04.2012թ. N315-Ա հրամանով սահմանվեց ընկերության նոր կազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

- ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,
- բ) Կառավարման Խորհուրդ,
- գ) Գործադիր մարմին

Ընկերության նշանակալից բաժնետերերն են.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, տիրապետում է 10000 (տաս հազար) դրամ անվանական արժեքով 2185 (երկու հազար հարյուր ութսունհինգ) սովորական բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում գումարվել է Տարեկան ընդհանուր ժողով, իսկ արտահերթ ընդհանուր ժողովներ չեն անցկացվել: ԲԸԺ-ը գումարվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնաշենքում՝ 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեով:

2. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացվել է 30.03.2012թ.:

3. ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ԲԸԺ-ի մասին ծանուցվել են փոստով և էլ. փոստով 09.03.2012թ.-ին, այն է ԲԸԺ-ից 21 օր առաջ: Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում: Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ՝ մաս 10, կետ 11, հասանելի է ընկերության ինտերնետային կայքում

http://www.sarm.am/js/editor_innova/assets/Kanonadrutyun.pdf:

4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով: Լիազորագրի ձևերը, Ընկերության կանոնադրության մաս 10, կետ 9-ով սահմանված կարգով, հասանելի են եղել բաժնետերերին:

5. Բաժնետերերը, Ընկերության կանոնադրության մաս 10, կետ 18-ով սահմանված կարգով, քվեարկել են կումուլյատիվ քվեարկությամբ:

6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, լիազորագրի ձևը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում http://www.sarm.am/am/about_sarm/reports:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության մաս 11-ը սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են http://www.sarm.am/am/about_sarm/kanonadrutiun.

Խորհրդի կազմը

01.01.2013թ. դրությամբ, Ընկերության Խորհուրդը բաղկացած է 12 անդամից, որոնցից 11 ոչ գործադիր են և 9 անկախ են(

Համաձայն Կանոնագրքի 10-րդ հոդվածի, “Անկախ” է համարվում Խորհրդի այն անդամը, ով.

1. Վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ ընկերությունում, բացառությամբ որպես Խորհրդի անդամ պաշտոնավարելուց:

2. Վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձանցից ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրությունից:

3. Վերջին 3 տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, գործադիր մարմնի ղեկավար կամ հաշվապահ, չի ունեցել նյութական բնույթի որևէ գործարար հարաբերություն, այդ թվում՝ վարկ կամ փոխառություն ստանալու և տրամադրելու հետ կապված, ընկերության կամ ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ:

4. Վերջին 5 տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության գործող կամ նախկին արտաքին աուդիտին իրականացնող անձի, նրա հետ փոխկապակցված ընկերությունների բաժնետեր կամ աշխատող:

5. Վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Ընկերության Խորհրդի անդամ և չի հանդիսանում վերոհիշյալ անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

6. Չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր կամ նրա ներկայացուցիչ ցուցակված ընկերությունների դեպքում (նշանակալից է համարվում իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը):

ԽՈՐՀՈՒՐԴ				
Պաշտոնը և անունը	Գործադիր¹	Ոչ գործադիր²	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
1. Նախագահ՝ Տիգրան Դավթյան		X		2012թ.
2. Անդամ՝ Ալեքսան Կարապետյան		X	X	2012թ.
3. Անդամ՝ Ռոբերտ Մակարյան		X	X	2012թ.
4. Անդամ՝ Արեգ Գալստյան		X	X	2012թ.
5. Անդամ՝ Անդրանիկ Ալեքսանյան		X	X	2012թ.
6. Անդամ՝ Լիլի Մաքսուդյան		X		2012թ.

¹ Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:
² Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

ԽՈՐՀՈՒՐԴ				
Պաշտոնը և անունը	Գործադիր¹	Ոչ գործադիր²	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
7. Անդամ՝ Արսեն Հախումյան		X	X	2012թ.
8. Անդամ՝ Լուսինե Յագուբյան		X	X	2012թ.
9. Անդամ՝ Նունե Դարբինյան		X	X	2012թ.
10. Անդամ՝ Ալեքսանդր Վարդանյան		X	X	2012թ.
11. Անդամ՝ Վլադիմիր Սահակյան		X	X	2012թ.
12. Քարտուղար՝ Ենոք Ազարյան	X			2012թ.

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ ներառյալ Կանոնագրքի 12(4) հոդվածով նախատեսված տեղեկությունները՝ տարիքը, մասնագիտությունը, հիմնական պաշտոնը, քաղաքացիությունը, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ, նշանակման օրը, պաշտոնավարման ընթացիկ ժամկետը, վերջին 3 տարվա աշխատանքային փորձը, ընկերությունում և փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը, ինչպես նաև խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը, տարվա ընթացքում խորհրդի անդամների պաշտոնաթողության և պաշտոնանկության, նրանց գործառույթների, ինչպես նաև Խորհրդի հանձնաժողովներին անդամության վերաբերյալ տեղեկությունները բացահայտված են Ընկերության տարեկան հաշվետվության մեջ, որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում http://www.sarm.am/am/about_sarm/reports:

Խորհրդի գործունեությունը

2012 տարվա ընթացքում Խորհուրդը չի գումարել որևէ նիստ: Խորհուրդը հիմնադրվել է ընկերության միակ բաժնետեր հանդիսացող ՀՀ էկոնոմիկայի նախարարի 11.09.2012թ. N749-Ա հրամանով: Հաշվի առնելով հիմնադրման կարճ ժամանակահատվածը Խորհուրդը դեռևս նիստ չի գումարել:

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդն ընդունել է չի ընդունել գնահատման քաղաքականություն:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը չի ստեղծել հանձնաժողովներ:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ տնօրենից:

Գործադիր մարմնի անդամների համառոտ կենսագրությունները, ինչպես նաև նրանց գործառույթների և պարտականությունների մանրամասները, բացահայտված են Ընկերության տարեկան հաշվետվության մեջ, որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում http://www.sarm.am/am/about_sarm/reports:

Գործադիր տնօրեն՝ ԵՆՈՔ ԱԶԱՐՅԱՆ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝ 1965-05-31

Կրթություն՝ Իրավագիտության դոկտոր

Ընկերությունում աշխատած տարիներ՝ 2008-11-25 մինչ այժմ

Անդամություն Ընկերության կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին՝
Հանդիսանում է Ընկերության Խորհրդի քարտուղարը

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2012թ. ընթացքում Ընկերության ներքին աուդիտն իրականացվել է Թամարա Ստեփանյանի կողմից, ով նշանակվել է միակ բաժնետեր, Խորհրդի նախագահի կողմից և հաշվետու է եղել Խորհրդին:

Ընկերության ներքին աուդիտն իրականացնող անձն իր գործառույթներն իրականացրել է համաձայն Կանոնագրքի 27-րդ հոդվածի:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության կորպորատիվ քարտուղար Խորհրդի կողմից չի նշանակվել:

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձ չի նշանակվել և չի իրականացվել:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ 30.03.2012թ.

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Ընկերության ինտերնետային կայքում http://www.sarm.am/am/about_sarm/reports:

Ստորագրված է

Խորհրդի նախագահ՝

Տիգրան Դավթյան

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Ենոք Ազարյան

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ – «Հետևիր կամ բացատրիր»

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Այո	Մաս 10
2.	ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	Այո	ԲԸԺ-ի գումարման օրը՝ 30.03.2012թ. օրակարգն ուղարկվել է 09.03.2012թ.
3.	ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	Այո	
4.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով (օր. էլեկտրոնային քվեարկությամբ):	Ոչ	Կանոնադրությունը նման հնարավորություն չի նախատեսում:
5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:	Այո	Մաս 10, կետ 9
6.	Արդյո՞ք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Ոչ	Առկա է միայն մեկ բաժնետեր
7.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	Առկա է միայն մեկ բաժնետեր
8.	Արդյո՞ք Խորհուրդը Ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	Առկա է միայն մեկ բաժնետեր
9.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալ ժողովի ժամանակ:	Այո	Առկա է միայն մեկ բաժնետեր

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
10.	Արդյո՞ք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	Առկա է միայն մեկ բաժնետեր, ով հանդիսանում է Խորհրդի նախագահ
Շահութաբաժինների վճարման քաղաքականություն			
11.	Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման քաղաքականություն, որը մշակվել է Խորհրդի կողմից, հաստատվել է ԲԸԺ-ում և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Պետական սեփականություն հանդիսացող 100% բաժնեմասով ընկերությունների համար շահութաբաժինների վճարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ:
12.	Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio):	Այո	Պետական սեփականություն հանդիսացող 100% բաժնեմասով ընկերությունների համար շահութաբաժինների վճարման կարգը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ:
Պետությունը որպես սեփականատեր [միայն Պետական ընկերությունների համար]			
13.	Պետությունն արդյո՞ք չի միջամտում Պետական Ընկերության (ՊԸ) առօրյա ղեկավարմանը:	Ոչ	Չի միջամտում:
14.	Պետությունը հրապարակել է սեփականության քաղաքականություն, որը սահմանում է պետական սեփականության ընդհանուր նպատակները, այն հատուկ նպատակները, որոնց պետք է հասնել, ինչպես նաև արդյո՞ք ընկերությունը ֆինանսավորվում է իր շահույթների հաշվին, թե ամբողջովին կամ մասնակիորեն ֆինանսավորվում է պետության կողմից:	Այո	Պետությունը մասամբ ֆինանսավորում է ստանդարտացման աշխատանքների կատարումը:
15.	Արդյո՞ք ՊԸ-ը մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք, համաձայն պետական քաղաքականության, կարող են մատուցվել միայն պետական հատվածի կողմից:	Այո	Ստանդարտացման աշխատանքների կազմակերպումը կարող է իրականացվել միայն պետական հատվածի կողմից:
Խորհուրդ			
16.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված Խորհուրդ, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Խորհուրդը հիմնադրվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 11.09.2012թ. թիվ 749-Ա հրամանով: Խորհրդի պարտականությունները և գործառույթները սահմանված են «Ստանդարտացման մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
17.	Արդյո՞ք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ:	Ոչ	Դեռևս Խորհուրդը նիստ չի կազմակերպել:
18.	Արդյո՞ք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:	Այո	Նախատեսված է օրենսդրությամբ, սակայն դեռ չի կիրառվել:
19.	Արդյո՞ք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյո՞ք նրանցից առնվազն երկուսն անկախ են:	Այո	
20.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել
21.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել
22.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել
Խորհրդի անդամների նշանակումը			
23.	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթ-	Այո	Խորհրդի անդամները ներկայացնում են ստանդարտացման բնագավառի շահագրգիռ կողմերին:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	ները և կենսագրական տվյալները:		
24.	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը ջնջել և համառոտ կենսագրականները հրապարակվել էն Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Ոչ	Նախատեսվում է հրապարակել Խորհրդի անդամիկ նիստի անցկացումից հետո:
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ			
25.	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	Ոչ	Նախատեսված է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով:
26.	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Ոչ	Գնահատման քաղաքականություն չի սահմանվել:
Խորհրդի նիստերի հաճախելիություն			
27.	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	Ոչ	Խորհրդի նիստ չի գումարվել:
ՊԸ-ն Խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները			
28.	Արդյո՞ք ՊԸ-ն խորհրդի անդամները բացահայտում են քաղաքական միավորումներին իրենց անդամությունը:	-	
29.	Այն քաղաքացիական ծառայողները, ովքեր ի պաշտոնե կարգավորիչ իրավասություններ ունեն տվյալ ՊԸ-ն նկատմամբ, արդյո՞ք ընդգրկվում են տվյալ ՊԸ-ն խորհրդի կազմում:	Այո	Ընդգրկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարը և նախարարության Որակի ենթակառուցվածքների վարչության պետը
	Խորհրդի անդամները պետք է նշանակվեն և պաշտոնավարեն նվազագույնը 3 տարի, բացառությամբ եթե պաշտոնանկ են արվում կարգապահական խախտումների կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքերով:	Ոչ	Պաշտոնավարման ժամկետ սահմանված չէ:
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները			
30.	Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան	Այո	Նախատեսվում է հրապարակել Խորհրդի անդամիկ նիստի

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:		անցկացումից հետո:
Խորհրդի նիստերի տարեկան պլան			
31.	Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Այո	Նախատեսված է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով:
32.	Խորհրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին են ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:	Այո	
Խորհրդի նախագահը			
33.	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	Չեն համատեղվում:
34.	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	Մաս 11 և Մաս 12
35.	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամներն իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին: Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	Այո	Ընկերությունն ունի Ուսումնական կենտրոն, որտեղ դասընթացներ են մատուցվում ստանդարտացման և համապատասխանության գնահատման ոլորտներում:
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից			
36.	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունն ապահովագրվել է Խորհրդի անդամների գործունեության վնասների ռիսկից:	Ոչ	Կանոնադրությամբ նման դրույթներ նախատեսված չեն: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդի նախագահը Ընկերության միակ բաժնետերն է, այդպիսի ռիսկերը վերահսկելի են:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Աուդիտի հանձնաժողով			
37.	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
38.	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
39.	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
40.	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
41.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև դիսկերի կառավարման համակարգերը:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
42.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում: Ներքին աուդիտի հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
43.	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
44.	Աուդիտի հանձնաժողովը դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառվել են տարեկան հաշվետվությունում:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
45.	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
Ներքին աուդիտ			
46.	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
47.	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
48.	Ներքին աուդիտն իրականացնող անձն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
49.	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար:	Այո	Հանձնաժողով դեռ չի ստեղծվել: Այդ գործառույթներն իրականացվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:
Արտաքին աուդիտ			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
50.	Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ աուդիտորական ծառայությունները:	-	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
51.	Արտաքին աուդիտ իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	-	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
52.	Ընկերությունն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	-	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
Խորհրդի այլ հանձնաժողովները			
53.	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
54.	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
55.	Բանկի Խորհուրդը պետք է ստեղծի ռիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողովներ՝ օժտված համապատասխան իրավասություններով:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
56.	ՊԸ-ն խորհուրդը պետք է ունենա թեկնածությունների առաջադրման հանձնաժողով, որը հրավիրում է խորհրդի անդամության թեկնածուներին, սահմանում է խորհրդի անդամների պաշտոնի նկարագիրը, վերոնշյալ գործընթացի թափանցիկությունը և անաչառությունը ապահովելու նպատակով իրականացնում է գովազդային աշխատանքներ (այդ թվում՝ առաջադրման հանձնաժողովում ձևավորվում է թեկնածուների ընտրման հանձնախումբ՝ որտեղ ընդգրկվում են ՊԸ-ն խորհրդի նախագահը և գործադիր մարմնի ղեկավարը, և որը մշտապես գնահատում է թեկնածուներին՝ հիմնվելով նրանց փորձի և որակավորման, ինչպես նաև պաշտոնի նկարագրին նրանց համապատասխանության վրա:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
57.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:		
58.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
Կորպորատիվ քարտուղար			
59.	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղար աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:	Ոչ	Նման անհրաժեշտություն չկա: Այդ պարտականությունները կատարվում են Խորհրդի քարտուղարի կողմից:
60.	Կորպորատիվ քարտուղարն աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:	Ոչ	Նման անհրաժեշտություն չկա: Այդ պարտականությունները կատարվում են Խորհրդի քարտուղարի կողմից:
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
61.	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվություն, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Ընկերության տարեկան հաշվետվությունները զետեղվում են ընկերության կայքում՝ http://www.sarm.am/am/about_sarm/reports հասցեով:
62.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:		
63.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Այո	
64.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	Այո	
65.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին:	Ոչ	ԿԿ Հայտարարագիրը ներկայացվում է առանձին
66.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է	Ոչ	Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքները բացակայում են:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	հստակ նշվի այդ մասին:		
67.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
68.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Ոչ	Առկա է միակ բաժնետեր՝ ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության:
69.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	Ոչ	Փոխկապակցված անձանց հետ գործարքներ չեն կնքվել:
70.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, ինչպես նաև տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:	Այո	Խորհրդի անդամիկ նիստից հետո այդ տվյալները կգետնվեն Ընկերության կայքում: Խորհրդի անդամները չեն վարձատրվում:
71.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտ իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	Ոչ	Արտաքին աուդիտ չի իրականացվում:
72.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:	Այո	
73.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբեր-	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	յալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները:		
74.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	Խորհրդի անդամները չեն վարձատրվում:
75.	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Ոչ	Առկա է միակ բաժնետեր և բաժնետոմսերի մեկ (սովորական) դաս:
Ընկերության ինտերնետային կայքը			
76.	Ընկերություն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Այո	http://www.sarm.am/am/about_sarm/kanonadrutiun
77.	Ընկերությանն ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Ոչ	Դեռ ոչ, քանի որ ԿԿ կանոնագիրքն ուժի մեջ է մտել 01.01.2012թ.-ից:
78.	ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե ինչպես է պետությունը պլանավորում մասնակցել Ընկերության կորպորատիվ կառավարմանը և ինչ ձևով է պատրաստվում իրականացնել սեփականատիրոջ իր քաղաքականությունը: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքում բացահայտել տեղեկատվություն իր գործունեության բոլոր այն ոլորտների մասին, որոնց վերաբերյալ որոշումների կայացումը չի կարող փոխանցվել	Այո	Տեղեկություններն աստիճանաբար ըստ առկայության կզետեղվեն Ընկերության կայքում:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Խորհրդին: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե արդյոք պետության քաղաքականության շրջանակում ընկերության գործունեությունը ենթակա է հատուկ կանոնակարգված վերահսկման և արդյոք այդ վերահսկողությունն իրականացվում է: ՊԸ-ն ինտերնետային կայքում պետք է նաև տեղեկություններ լինեն ՊԸ-ն խորհրդի գործունեության չափանիշների մասին: ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել շահառուներին վերաբերող ցանկացած նշանակալից տեղեկություններ:		
79.	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Այո	Անգլերեն և ռուսերեն, բացառությամբ փաստաթղթերի:
80.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	Այո	Պետական գրանցման վկայականը տեղադրված չէ, քանի որ որևէ հետաքրքրություն չի ներկայացնում կայքի հաճախորդների համար:
81.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	Ոչ	ԿԿ բաժինը դեռ լրամշակման փուլում է և մոտ ապագայում նախատեսվում է զետեղել նշված տեղեկությունները:
82.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Ոչ	ԿԿ բաժինը դեռ լրամշակման փուլում է և մոտ ապագայում նախատեսվում է զետեղել նշված տեղեկությունները:
83.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	Ոչ	Կտեղադրվի առկայության դեպքում:
84.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում	Ոչ	Առկա է միակ բաժնետեր:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:		
85.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Ոչ	Այդ քաղաքականությունը սահմանված է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ և հասանելի է www.arlis.am կայքում:
86.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	Ոչ	Ընկերության կառուցվածքը տեղադրված է կայքում՝ առանձին բաժնով: Բաժնետոմսերի խաչաձև տնօրինում չի կիրառվում:
87.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները:	Այո	
Միայն Պեղական ընկերությունների համար			
88.	ՊԸ-ում պետությունը ներկայացնող պետական մարմինը Տարեկան հաշվետվությունում/ինտերնետային կայքում բացահայտել է Ընկերությանը տրամադրված որևէ պետական օգնության, սուբսիդիաների, դրամաշնորհների, ինչպես նաև պարտավորությունների մասին տեղեկությունները: Անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ուղղակի և անուղղակի ձևով պետությանը պատկանող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառվեն տարեկան հաշվետվությունում և բացահայտվեն ՊԸ-ն ինտերնետային կայքում:	Այո	Ստանդարտացման տարեկան ծրագրերը, որոնց համար ստացվում են պետական դրամաշնորհներ, զետեղվում են ընկերության կայքում՝ ամբողջությամբ:
Վարքագծի կանոններ			
89.	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	Այո	Զեեետեղված է ընկերության կայքում:
90.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	Այո	http://www.sarm.am/am/act_of_the_law/tnoreni_hramanner

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
91.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահագանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	Այո	
92.	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	Այո	http://www.sarm.am/am/act_of_the_law/tnoreni_hramanner
Կանոնադրական կապիտալի ավելացումը			
93.	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Ոչ	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:
Շահառուներ			
94.	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն ընկերությունից:	Ոչ	Շահառուների շրջանակը սահմանված է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով և Ընկերությունում ներդրված որակի կառավարման համակարգով:
95.	Ընկերությունը ընդունել է քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Այո	Որակի պատասխանատու: Ընկերությունում ներ է դրված ՀՍ ԻՍՕ 9001-2008 ստանդարտին համապատասխան որակի կառավարման համակարգ:
96.	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	Ոչ	Շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը մշակվել են ընկերության կողմից: Ընկերությունում ներ է դրված ՀՍ ԻՍՕ 9001-2008 ստանդարտին համապատասխան որակի կառավարման համակարգ: Նշանակված է Որակի պատասխանատու:
97.	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները:	Այո	Ոչ մի խնդիր:
Միայն Պեղական ընկերությունների համար			
98.	Պետական սեփականության քաղաքականությունը ճանաչում է Ընկերության պատասխանատվությունը շահառուների առջև:	Այո	Այնքան էլ հստակ չէ:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
99.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է բաժին՝ շահառուների հետ սեփականության քաղաքականության իրականացման վերաբերյալ:	Այո	Շահառուների հետ հարաբերությունները կարևոր դեր են կատարում ստանդարտացման աշխատանքներում: